ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛАСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАН

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

N---3

«8» հունվարի 2019թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի 2018թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:

Առդիր՝ 10 թերթ

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«3» դեկտեմբերի 2018թվական թիվ 17

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ, ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թվականի օգոստոսի 29-ի, թիվ 12-Ն հրամանով հաստատված 1,2 հավելվածների 8-րդ կետը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար, լիազորված անձ նշանակել՝ Մրգաստանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից՝ Աննա Հակոբյանին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 3
գ. Մրգաստան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

«20» դեկտեմբերի 2018թվական թիվ 18-Ա

### ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի հոդված 33-ի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 18-ի, «2018թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 6 հերթական նիստի, թիվ 56-Ն որոշումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 18-ի, «2018թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 6 հերթական նիստի, թիվ 56-Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումը.

01 բաժին 01 խումբ 01 դաս 4269 հոդվածից պակասեցնել 200.0 հազար դրամ
08 բաժին 02 խումբ 03 դաս 4111 հոդվածից պակասեցնել 928.0 հազար դրամ
08 բաժին 02 խումբ 04 դաս 4239 հոդվածից պակասեցնել 345.0 հազար դրամ
01 բաժին 01 խումբ 01 դաս 4112 հոդվածին ավելացնել 830.0 հազար դրամ
01 բաժին 01 խումբ 01 դաս 4237 հոդվածին ավելացնել 45.0 հազար դրամ
01 բաժին 01 խումբ 01 դաս 4264 հոդվածին ավելացնել 200.0 հազար դրամ
04 բաժին 05 խումբ 01 դաս 4251 հոդվածին ավելացնել 168.0 հազար դրամ
08 բաժին 02 խումբ 03 դաս 4112 հոդվածին ավելացնել 230.0 հազար դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 20
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2018թվական թիվ 19_Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՆՐԱ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ «ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ» ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և իրականացնելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34 հոդվածի պահանջները.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.2018թվականի ընթացքում աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի, ինչպես նաև նրա ենթակայության տակ գտնվող «Մշակույթի տան» աշխատակազմին խրախուսել նրանց նկատմամբ կիրառելով՝ միանվագ դրամական պարգևատրում:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 25
գ. Մրգաստան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2018թվական թիվ 20-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 77-ի երրորդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Անցկացնել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ամենամյա գույքագրում:
2.Գույքագրման հանձնաժողովի նախագահին՝ աշխատանքներն իրականացնել 2018թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 28-ը:
3.Աշխատանքի ավարտից հետո գույքագրման փաստաթղթերը ներկայացնել՝ համայնքի ավագանու հաստատմանը:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 25
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«14» դեկտեմբերի 2018թվական թիվ 25

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 109-ի առաջին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի տեղակալ Էլմիրա Ավետիկի Մանուկյանի ծանուցագիրը, ապա դիմումը՝ իր զբաղեցրած պաշտոնից ազատվելու մասին.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Լուծել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի տեղակալ Էլմիրա Ավետիկի Մանուկյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը 17 դեկտեմբերի 2018թվականից:

2.Էլմիրա Ավետիկի Մանուկյանը իր մոտ պահվող փաստաթղթերը հանձնի համայնքի ղեկավարին:

3.Հաշվապահին՝ հաշվարկել և կատարել վճարում օրենքով սահմանված կարգով:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 14
գ. Մրգաստան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«17» դեկտեմբերի 2018թվական թիվ 26

### ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 38-ի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 17-ի, թիվ 6 հերթական նիստի, թիվ 51 -Ա որոշումը.

### ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Կնքել պայմանագիր՝ «ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ» ՍՊԸ -ի հետ, համայնքի ավագանու կողմից հատկացված՝129 000 /մեկ հարյուր քսանինը հազար/ դրամի սահմաններում, համայնքի 0-ից 10 տարեկան երեխաներին ամանորյա նվերներ ձեռք բերելու համար:
2.Մշտական հանձնաժողովին՝ ձեռք բերել նվերները, կազմակերպել միջոցառում և կատարման մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից և գործում է մինչև 28 դեկտեմբերի 2018թվականը:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 17
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«26» դեկտեմբերի 2018թվական թիվ 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՆՐԱ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ «ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 35-ի առաջին մասի 24 կետով, Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 219-ի առաջին մասի 2-րդ կետով.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.2018թվականի ընթացքում աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար, միանվագ դրամական պարգևատրում կիրառել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի և նրա ենթակայության տակ գտնվող «Մշակույթի տան» աշխատակիցների նկատմամբ.
ա.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Սուսաննա Վանիկի Ղարիբյանին պարգևատրել 100.0 /մեկ հարյուր հազար/ դրամով:
բ.«Մշակույթի տան» վարիչ՝ Մանուկ Ռաֆիկի Հարությունյանին պարգևատրել 90.0 /իննսուն հազար/ դրամով:
գ.«Մշակույթի տան» հավաքարար Գայանե Միսակի Հակոբյանին պարգևատրել 70.0/յոթանասուն հազար /դրամ:
դ. «Մշակույթի տան» պահակ Էլզա Հրայրի Հովակիմյանին պարգևատրել 70.0/յոթանասուն հազար /դրամ:
ե.Համայնքապետարանի վարորդ Արթուր Ջավենի Սարգսյանին 90.0/իննսուն հազար դրամ/
2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 26
գ.Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«28» դեկտեմբերի 2018թվական թիվ 28

ՄԱՐԱՏ ԱՎԵՏԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 109-ի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Մարատ Ավետիկի Մուրադյանի հետ կնքված թիվ 4 ժամանակավոր աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Լուծել Մարատ Ավետիկի Մուրադյանի հետ կնքված թիվ 4 ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը 2018թվականի դեկտեբերի 28-ից ժամկետը լրանալու կապակցությամբ:
2.Հաշվարկը կատարել վճարում օրենքով սահմանված կարգով:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 28
գ.Մրգաստան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«28» դեկտեմբերի 2018թվական թիվ 29

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 49-ի առաջին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 19 դեկտեմբերի 2018թվականի, թիվ 01/05/6726-18 գրությունը, Ազգային վիճակագրական ծառայությանը տարեկան հաշվետվություն ներկայացնելու մասին.

### ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում առկա անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքներն իրականացնելու և տարեկան հաշվետվություն ներկայացնելու համար, ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի անասնաբույժին մասնակից դարձնել հանձնաժողովի աշխատանքներին:
3.Հաշվառման աշխատանքներն իրականացնել՝ 2018թվականի հունվարի 1-ից, 16-ը ընկած ժամանակահատվածում և մինչև հունվարի 17-ը հաշվառման ամփոփ տվյալները ներկայացնել Ազգային վիճակագրական ծառայության՝ Արմավիրի մարզային գործակալություն:
շտական հանձնաժողովին՝ ձեռք բերել նվերները, կազմակերպել միջոցառում և կատարման մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում՝ 2019թվականի հունվարի 1-ից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 28
գ. Մրգաստան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մրգաստան
համայնքի ղեկավարի
դեկտեմբերի 28-ի թիվ 29
կարգադրության

## ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝

Գայանե Եղիազարյան /առաջին կարգի մասնագետ/
Աշոտ Հովակիմյան /առաջատար մասնագետ/
Վասիլ Հովսեփյան /անասնաբույժ/
Մանուկ Հարությունյան /«Մշակույթի Տան» վարիչ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«27» դեկտեմբերի 2018թվական թիվ 30

## ՌԱՖԻԿ ՀԵՆՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի հոդված 164-ի առաջին մասով, Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանի 2018 թվականի տեղափոխված հերթական արձակուրդը օգտագործելու վերաբերյալ.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանին տրամադրել 2018թվականի իրեն հասանելիք տեղափոխված հերթական արձակուրդը 2019թվականի հունվարի 8-ից 20 աշխատանքային օր տևողությամբ:
3.Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանը անցնի իր պարտականությունների կատարմանը 6 փետրվարի 2019թվականից:
4.Հաշվապահին՝ կատարել համապատասխան վճարում օրենքով սահմանված կարգով:
5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 27
գ.Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«27» դեկտեմբերի 2018թվական թիվ 30

## ՌԱՖԻԿ ՀԵՆՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի հոդված 164-ի առաջին մասով, Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանի 2018 թվականի տեղափոխված հերթական արձակուրդը օգտագործելու վերաբերյալ.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավար Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանին տրամադրել 2018թվականի իրեն հասանելիք տեղափոխված հերթական արձակուրդը 2019թվականի հունվարի 8-ից 20 աշխատանքային օր տևողությամբ:
3.Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանը անցնի իր պարտականությունների կատարմանը 6 փետրվարի 2019թվականից:
4.Հաշվապահին կատարել համապատասխան վճարում օրենքով սահմանված կարգով:
5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական դեկտեմբերի 27
գ.Մրգաստան